

## ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ

ՀՀ ԲՆԱՊԱՀՊԱՆՈՒԹՅԱՆ ԵՎ ԸՆԴԵՐՔԻ ՏԵՍՉԱԿԱՆ ՄԱՐՄՆԻ ԿԱՌԱՎԱՐՄԱՆ  
ԽՈՐՀՐԴԻ N 1 ՆԻՍՏԻ

ք. Երևան

19 հունիսի 2018թ.  
Ժամը՝ 16:00

### Մասնակիցներ

- 1. Էրիկ Գրիգորյան**  
ՀՀ բնապահպանության նախարար
- 2. Արթուր Գրիգորյան**  
ՀՀ էներգետիկ ենթակառուցվածքների և բնական պաշարների նախարար
- 3. Հայկ Այվազյան**  
ՀՀ վարչապետի աշխատակազմի տեսչական մարմինների աշխատանքների համակարգման գրասենյակի ղեկավար
- 4. Ալբերտ Բաբայան**  
ՀՀ տնտեսական զարգացման և ներդրումների նախարարի տեղակալ
- 5. Ալեն Ամիրխանյան**  
Հայաստանի ամերիկյան համալսարան, Յակոբեան բնապահպանական կենտրոնի տնօրեն
- 6. Արմեն Հովհաննիսյան**  
Հայաստանի ազգային պոլիտեխնիկական համալսարանի ընդերքաբանության և շրջակա միջավայրի պահպանության ամբիոնի վարիչ, տեխնիկական գիտությունների դոկտոր, պրոֆեսոր
- 7. Սիլվա Ադամյան**  
«Բնապահպանական հասարակական միություն» հասարակական կազմակերպություն
- 8. Պերճ Խաչատրյան**  
Հայաստանի արդյունաբերողների և գործարարների միություն

## **Հրավիրվածներ**

### **Արթուր Գրիգորյան**

տեսչական մարմնի ղեկավարի թեկնածու

### **Արթուր Ասոյան**

ՀՀ կառավարության աշխատակազմի տեսչական բարեփոխումների խմբի փորձագետ-խորհրդատու

### **Տարոն Հակոբյան**

ՀՀ կառավարության աշխատակազմի տեսչական բարեփոխումների խմբի փորձագետ-խորհրդատու

## **ՕՐԱԿԱՐԳ**

### **Հարց 1**

ՀՀ վարչապետին ներկայացնելու նպատակով ՀՀ բնապահպանության և ընդերքի տեսչական մարմնի ղեկավարի պաշտոնում նշանակելու համար Արթուր Գրիգորյանի թեկնածության քննարկում:

### **Ներկայացնող՝ Է. Գրիգորյան**

Խորհրդի նիստը բացեց ՀՀ բնապահպանության նախարար Է. Գրիգորյանը, ով խորհրդի հաստատմանը ներկայացրեց օրակարգը, որում ընդգրկված էր մեկ հարց. Հավանություն տալ ՀՀ բնապահպանության և ընդերքի տեսչական մարմնի ղեկավարի պաշտոնում Արթուր Գրիգորյանի թեկնածությանը և ներկայացնել ՀՀ վարչապետին:

Խորհրդի անդամների կողմից օրակարգը հաստատվեց միաձայն:

ՀՀ բնապահպանության նախարար Էրիկ Գրիգորյանը հակիրճ ներկայացրեց Արթուր Գրիգորյանին և խոսքը փոխանցեց վերջինիս:

Տեսչական մարմնի ղեկավարի թեկնածուն ներկայացրեց իր աշխատանքային գործունեության վերաբերյալ տեղեկատվություն՝ ընդգծելով որ երկար ժամանակ զբաղվել է հանքարդյունաբերության ոլորտում բնապահպանական խնդիրներով և իրականացրել է ոլորտային բազմաթիվ հետազոտություններ:

Խորհրդի նախագահի առաջարկով խորհրդի անդամներն իրենց հարցերը ուղղեցին տեսչական մարմնի ղեկավարի թեկնածուին.

Պ. Խաչատրյանը, դիմելով թեկնածուին, նշեց, որ վերջինս իր հասարակական գործունեության ընթացքում շատ դեպքերում աչքի է ընկել ընդերքօգտագործման ոլորտում կատեգորիկ դիրքորոշումներով, և հետաքրքրվեց, թե արդյոք պետական պաշտոնի նշանակվելու դեպքում կարող են փոփոխություններ լինել թեկնածուի դիրքորոշումներում:

Իր պատասխանում թեկնածուն նշեց, որ հասարակական գործունեության ընթացքում, երբ քաղաքացին չի զբաղեցնում պետական պաշտոն, սահմանադրական իրավունք ունի անելու այն ամենը ինչ օրենքով արգելված չի, սակայն այլ է իրավիճակը այն դեպքում, երբ զբաղեցնում ես պետական պաշտոն, այդ դեպքում պարտավոր ես անել այն ինչ գտնվում է լիազորությունների դրջանակներում: Այդ պատճառով իր նշանակման դեպքում առաջին հերթին խնդիր է ունենալու պատշաճ կերպով իրականացնել իրեն վերապահված լիազորությունները:

Պատասխանելով Պ. Խաչատրյանի՝ լրատվամիջոցների և հանրային հատվածի ստուգումներին մասնակցելու վերաբերյալ հարցին, Ա. Գրիգորյանը նշեց, որ կարևորում է լրատվամիջոցների մասնակցությունը հատկապես հակակոռուպցիոն տեսակետից և նախատեսում է ապահովել հանրային հատվածի հնարավորինս լայն մասնակցությունը բացառապես օրենսդրության շրջանակներում:

Պ. Խաչատրյանը նշեց, որ խորհուրդը պետք է ակտիվ ներգրավվածություն ունենա տեսչական մարմնի գործունեության հետ կապված տարբեր հարցերի քննարկմանը և որոշումների ընդունմանը՝ զուտ ֆորմալ մարմնից վերածվելով գործուն կառույցի:

Կառավարման խորհրդի անդամ Ա. Ամիրխանյանը, ողջունեց Ա. Գրիգորյանի թեկնածությունը՝ նշելով որ երկար տարիներ ծանոթ է վերջինիս գործունեությանը և կարևորում է նրա սկզբունքայնությունը, սակայն կարծում է, որ թեկնածուի սկզբունքների իրականացման համար տեսչական մարմինն ունի կարողությունների զարգացման լուրջ անհրաժեշտություն և հետաքրքրվեց թեկնածուից, թե ինչպես է նա պատկերացնում կարողությունների զարգացման հնարավորությունը:

Ի պատասխան Ա. Ամիրխանյանի հարցի Ա. Գրիգորյանը նշեց, որ կարողությունների զարգացումը տեսնում է երկու ուղղություններով՝ տեխնիկական հագեցվածության մեծացում և աշխատակիցների որակավորման բարձրացում և այդ ուղղություններով կարևորում է ինչպես ՀՀ բնապահպանության նախարարության հետ, այնպես էլ՝ միջազգային, հասարակական կազմակերպությունների և գիտական կենտրոնների հետ համագործակցության խորացումը:

Հարցի վերաբերյալ ՀՀ բնապահպանության նախարարը նշեց, որ նախարարությունը միջազգային գործընկերների հետ իր հանդիպումներում

մշտապես կարևորում է տեսչական մարմնին տեխնիկական աջակցություն տրամադրելու հարցը և այդ ուղղությամբ արդեն կան նախնական պայմանավորվածություններ:

« Հներգետիկ ենթակառուցվածքների և բնական պաշարների նախարար Արթուր Գրիգորյանն, իր խոսքում նշեց, որ թեկնածուի նշանակման դեպքում վերջինիս սպասվում է բարդ և պատասխանատու աշխատանք և հաջողություն մաղթեց նրան՝ նշելով որ տեսչական մարմնից ինքն ակնկալում է ստանալ որոշակի ստույգ տվյալներ մետաղական հանքարդյունաբերության ոլորտում տնտեսավարողների կողմից իրականացված և իրականացվող գործունեության վերաբերյալ՝ հատուկ ընդգծելով, որ « վարչապետի և « կառավարության կողմից առկա է հստակ կամք ոլորտում օրինականություն ապահովելու վերաբերյալ:

Տեսչական մարմնիների համակարգման գրասենյակի ղեկավար Հ. Այվազյանն իր խոսքում նշեց, որ գրասենյակը նախատեսում է օժանդակել տեսչական մարմնի աշխատակիցների վերապատրաստմանը և նախատեսում է ներդնել տեղեկատվության փոխանակման համակարգ, ինչը ևս օգտակար կլինի տեսչական մարմնի արդյունավետության բարձրացման համար: Շարունակելով իր խոսքը Հ. Այվազյանը նշեց, որ ակնկալում է, որ տեսչական մարմնն իր արդյունավետության բարձրացման նպատակով հատուկ կկարևորի վերլուծական աշխատանքի իրականացումը: Հ. Այվազյանն առաջարկեց տեսչական մարմնի ղեկավարի թեկնածուին նշանակվելու դեպքում մյուս նիստին հստակ նշել առկա խնդիրները և դրանց լուծման հնարավոր ուղիներն ու եղանակները:

Խորհրդի անդամները մտքեր փոխանակեցին ոլորտում առկա խնդիրների և դրանց լուծման ճանապարհների վերաբերյալ:

Ամփոփելով նիստը՝ « բնապահպանության նախարար Է. Գրիգորյանը օրակարգի հարցը դրեց քվեարկության:

Խորհուրդը միաձայն որոշում կայացրեց հավանություն տալ « բնապահպանության և ընդերքի տեսչական մարմնի ղեկավարի պաշտոնում նշանակելու համար Արթուր Գրիգորյանի թեկնածությանը և այն ներկայացնել « վարչապետին:

### **Էրիկ Գրիգորյան**

« բնապահպանության նախարար

« բնապահպանության և ընդերքի

տեսչական մարմնի կառավարման խորհրդի նախագահ